ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

16 փետրվարի 2023թ. **N 4-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 7-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 30-ի թիվ 50-Ն որոշման հավելվածի 26-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Մասնագիտական դասընթացների ստուգարքների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները, որոնց վավերականության ժամկետը լրանում է 2023 թվականի հունվարի 1-ին և փետրվարի 17-ին, համարել վավեր մինչև 2023 թվականի ապրիլի 3-ը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ.Հովակիմյան**